

ՑՈՒՑԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՅԹՆԵՐԸ ՀԱՅՈՑ ՄԵՋ

Ե. Լ. ԳԵՎՈՐԳՅԱՆ

Ցուցական շարժույթները առօրյա կյանքում տարածվածներից են և կոչված են շրջապատից առանձացնելու անձանց, առարկաներ, որոշակի տարածություն, նշելու գործողության ուղղությունը, տեղը, վայրը և այլն: Շարժական (ժեստիկուլյացիոն) իմաստային խմբերի մեջ այս խումբը հնագույնն է, և դրա մեջ մտնող շարժույթների մի մասը, հասարակայնորեն շտաբորոշված, շարժումների ձևով արդեն գործածվում էր լեզվի նախնական զարգացման շրջանում՝ նեանդերթալյան մարդու կողմից:

Ինչպես կտեսնենք, հայոց մեջ ցուցական շարժույթները մեծավ մասամբ իրականացվում են շարժանքի (ժեստ), մի քանի դեպքում՝ մարմնաշարժման, դիմախաղի, կեցվածքի ձևերով, և շարժումների լեզվի դրսևորման հինգ միջոցներից միայն քայվածքն է այստեղ անմասն մնում: Նախ անդրադառնանք այն հարցին, թե ցույց տալու ժամանակ մարմնի մասերից որոնք են հիմնական գործառնությունը կատարում, և թե ինչպիսին են դրանց բնորոշ շարժույթները:

Ձեռք, թև: Անշուշտ, որպես ցույց տալու միջոց, ամենից հաճախ գործադրվում են ձեռքն ու թևը, իսկ դրանց բնորոշ շարժույթներից ամենից հաճախ հանդիպում է հետևյալը. մոտ առարկաների դեպքում նախաբազուկը, հետո առարկաների դեպքում ամբողջ թևն ուսից անհրաժեշտ ուղղությամբ մեկնվում է առաջ. ձեռքի դիրքը զատորոշում է պահանջվող օբյեկտը: Շարժանքը հայոց լեզվում արտացոլված է քառասունի՛ շափ բառակապակցություններով, որոնցում որպես գերակա բաղադրիչ հանդես են գալիս «բազուկ», «թև», «ձեռք» գոյականական բաղադրիչները, իսկ որպես գործողության անուններ՝ մեծ մասամբ «երկարել», «կարկռել», «մեկնել», «պարզել», «տանել», «տարածել» բայական բաղադրիչները, ուղղությունը նշվում է «մեկի (մի բանի) կողմը», «մեկի (մի բանի)», «դեպի մեկը (մի բան)», «մեկի (մի բանի) ուղղությամբ», և մի քանի նման այլ բաղադրիչներով: Ինչպես. «Աջ բազուկը տաբածելով դեպի մեզ՝ եկեղեցու պատի տակ շարված որբերս, ասաց. — ... Ահա իրանք են ձեր ... խնամքին սպասող ... որբերը...» (ԳՄ): «Ահա մերինները կուզան կոր, գոչեց Բարսեղ էֆենտի, թևը դեպի փողոց երկարելով: Ամենքն ալ ցույց տված կողմը նայեցան» (ԵՕ):

Մի քանի բառակապակցության կազմի մեջ մտնում է «ցույց տալ» հարադիրը՝ «ձեռքի շարժումով ցույց տալ», «ձեռքով ցույց տալ»: «Բենիամինը ձեռքի շարժումով ցույց տվեց տատիս ու քրոջս» (ՎԳ): Խ. Դաշտենցը «Մատնացույց անել» հարադիր բայի համարանությամբ գործածում է «ձեռնացույց անել» բառակապակցությունը. «— Թամոն էստե՞ղ է:— Իմ հարևանն է,— բացատրեց Գևորգը և ձեռնացույց արավ նրա խրճիթը: (Խոդեղան): «— էս-

¹ Արտացոլող բառերն ու բառակապակցությունները մշտապես կարող են ավելանալ, ուստի դրանց վերաբերյալ այս և հետագայում քերվող թվերը պետք է դիտել որպես միակազմություն:

տեղ նայիր,— խորհրդավորութեամբ ասաց Թամոն ձեռնացուց անելով երկու ածդահա սալաքար...» (Ն. տ.):

Որոշակի դեպքերում շարժանքը կատարվում է շարժասական սաստկու-
թյան ուժգին աստիճանում՝ երկանդամ կատարումով: Շարժասողը դեպի ան-
հրաժեշտ օբյեկտն է պարզում իր ձեռքերը (թևերը), որով թե՛ իր վերաբեր-
մունքն է արտահայտում դրա նկատմամբ, թե՛ ընդգծում վերջինիս կարևո-
րությունը: Ուժգին աստիճանի կատարումը համեմատաբար սակավ է հան-
դիպում, սակավ են նաև (մեկ տասնյակի շափ) նրա արտացոլման ձևերը
հնչյունական լեզվում, որոնցից են. բազուկները դեպի մեկը (մի բան) եր-
կարել (մեկնել, պարզել), երկու ձեռքը մեկին (մի բանի) պարզել (մեկնել),
դույզ ձեռքերը մեկին (մի բանի) պարզել, ձեռքերը դեպի մեկը (մի բան)
երկարել (մեկնել, պարզել): «Տանտիկինը հարեան սենյակի դռները բացելով՝
կանգնեց շեմքին և ասաց ձայնին հատուկ քաղցրություն տված.— Լամեցեք,
խնդրեմ... ու զույգ ձեռքերը պարզելով ցույց տվեց սարքած սեղանը: Հյու-
րերն իրար ետևից աշխույժ քայլեցին դեպի սեղանը» (ՍԶ):

Զաջորդ ցուցական շարժույթն է՝ «ձեռքը մի բանի վրա դնել»: Շարժ-
սողն ափը դնում է անհրաժեշտ առարկայի վրա, որով այն առանձնացնում է
չրջակա մյուս առարկաներից: Արտացոլված է լեզվական մի քանի կաղա-
պարով: «— Սա քանիսո՞վ ես առել,— հարցրեց Արշուն, ձեռք կուլայի վրա
դնելով:— ... Վեց շահի» (ՍԶ): «— Մի գառ եմ ուզում:— Զոկիր: ... Բա-
կուրը խառնվեց գառներին. ո՞րն ընտրեմ: ... Ձեռքը դրեց մի երկուսի մեջ-
քին...» (ԱՍ):

Որոշակի պահանջմունքներից մղված (առարկայի ընդգծված զատորոշում,
վերջինիս նկատմամբ հուզական վերաբերմունք, հաղորդակցի ուշադրության
բրավում)՝ շարժասողը առարկան ցույց է տալիս ոչ թե ձեռքը վրան դնելով,
այլ խփելով: Այս կերպ կատարվում է մի երրորդ կարգի շարժանք, որը նա-
խորդի համեմատությամբ ավելի հաճախ է գործածվում և արտացոլված է
քսանի շափ լեզվական կաղապարներով: Բառակապակցությունների գերակա
անդամներն են՝ ափ, ձեռնափ, ձեռք գոյական բաղադրիչները՝ համատեղված
զարկել (զարնել), խփել, հարվածել բայական բաղադրիչների հետ: Ինչպես.
«— Ո՞վ է հորինել այս թուղթը,— գոչեց նա ձեռքը զարկելով կնիճ կտա-
կին:— Ինքը՝ հանգուցյալը, պարզ չէ՞ միթե...» (Շ): «... Ով ինձ արգելի թոնր
լինել, գլուխը սխտորի պես կթոցնեմ, այ, սրանով, կամ փորը ծխով կլցնեմ;
այ, սրանով:— Եվ այդ ասելիս Մարջանը ետ է քաշում յափունջի փեշերը
ու ձեռքով զարկում նախ փոքրիկ դաշունին, ապա ատրճանակին» (Շ): Երկ-
րորդ տարբերակում առարկան ցույց է տրվում ոչ թե ափի, այլ շորս մատ-
նների հարվածով, և, բնականաբար, «մատ» բաղադրիչը դառնում է գերակա:

Շարժանքը կատարվում է նաև սաստկության ուժգին աստիճանում, որն
այս դեպքում արտահայտվում է հարվածների կրկնության եղանակով: Բառա-
կապակցություններում հանդես են գալիս գործողության տևականություն ցույց
տվող բայեր՝ թխթխկացնել, թփթփացնել, ծեծել, Օրինակներ. «— Ավանում
դիշերային դպրոց կա:— է՛-է՛,— Վարոսը ... տղզաց,— մազերս թափվել
են,— ափով թփթփացրեց բացված ճակատին:— ... Լակոտների հետ դասի
նստե՞մ» (ՄԳ): «Ակունը խփեց ուսիս, ուշադրությունս հրավիրելով, հետո
ձեռքը թփթփացրեց կոնքին, ուր տոպրակի նման մի բան էր կախված վզից:—
Ի՞նչ է,— ասացի,— նախաճա՞շ:— Խելոք, ... հեռադիտակ» (ԿՍ): «Պարիկոն
մատներով ծեծում է կուրծքը, հառաչում է, որով ուզում է ասել մորս»՝ թե
«Դու որ գիտենաս, թե այստեղ կրծքիս տակ ինչեր կան...» (ՍԱ):

Ձեռքի մասնակցությամբ կատարվում են մի շարք այլ շարժույթներ ևս,
որոնց կանդաղառնանք իրենց տեղերում շարադրանքի այլ պահանջներով:

Յուցամատ: Ձեռքից հետո ցուցական շարժույթներին ամենից ավելի մասնակցում է ցուցամատը: Քեկ նույն ենթավերնագրի տակ ներկայացվելիք շարժանքներում ձեռքն ու թևը գրեթե նույնպիսի ակտիվ դեր են խաղում, լայց օբյեկտի առանձնացումը որոշվում է ցուցամատի վերջնական շարժումներով ու դիրքով: Յույց տալու գործառնությունը, որպես բնորոշ հանգամանք, արտահայտված է այս մարմնամասի անվանման մեջ, որը նրան տարբերակում է մյուս մատներից: Ինչպես կտեսնենք, բառակապակցություններում այդ անվանումը փոխարինվում է հաճախ պարզապես «մատ» բառով, այն նկատառումով, որ առջևում եղած օբյեկտները մյուս մատներով շին ցույց տալիս, և խոսքը միայն ցուցամատի մասին կարող է լինել:

Առօրյայում ամենից ավելի հաճախականություն ունի «ցուցամատը մեկնելով ցույց տալ» շարժանքը. նախաբազուկը, պահանջի դեպքում նաև ամբողջ թևն ուսից առաջ է պարզվում, ցուցամատն անհրաժեշտ ուղղություն մեկնելով է դեպի օբյեկտը. մյուս մատները կիսափակ են, ափը՝ մեծ մասամբ շեղակի ուղղված դեպի ներքև: Հաճախականությունը համապատասխան շարժանքը լայնորեն արտացոլված է հնչյունական լեզվում՝ ավելի քան քառասուն բառ ու բառակապակցությամբ: Դրանց մեծ մասը «մատ», «ցուցամատ» դերակա անդամներով. «մեկի (մի բանի) կողմը», «դեպի մեկը (մի բան)» բաղադրիչներով և երկարի (երկնցնել), մեկնել, պարզել, տնկել, ցցել, թուշ անել, ձգել, ուղղել, թեքել բայերով կաղմված բառակապակցություններ են: Այլ կարգի հարադիր բայերից ունենք՝ մատնանիշ անել, մատնացույց անել, մատով ցույց տալ (ցուցնել), ցուցամատով ցույց տալ: Կան մի քանի առսնձին բառերով արտահայտված խոսքի մասեր՝ մատնանշել, մատնանշում: Օրինակներ. «— Այդ ինչի՞ կնայեք, վարպետ,— ... ասաց Հովհաննեսը: Պատասխանի փոխարեն Ոսկանը մատը պարզեց դեպի ծովը» (ՀՂ): «Այ, էփեմիա ֆան, քանի գուզիս (մատնանիշ անելով տեղը) էնդի լիքն է» (ԳՍՈԻ): «Արեւլյանը ... գերադասեց ոտքով գալ բոլորիս հետ:— Ես այս ջահելների հետ կամաց-կամաց կգնամ,— մատնացույց արեց մեզ» (ԳՁ): «Կրտսերն ... ուրախացած մեկնելով ցուցամատը դեպի եկողը, նայեց վեր՝ ավագին: Ավագը գլխով արեց» (ՄԱ): «Կոմիտասը ասաց, մատնանշելով ինձ:— Սանթացիր, Ռհանես, սա Վահան Տեր-Առաքելյանն է՝ իմ մեներգիչը» (ՔԺԸ): Մ. Գալշոյանն օգտագործել է «ցուցամատել» բայը. «— Գիրքը հոս բեր, ... կարդահատիկ-հատիկ,— խիստ պահանջեց Մամբրեն,— ... մեկիկ-մեկիկ ցուցամատե: ... Քեզ ասի կարդա ու ցուցանե: ... — Այբ, բեն, գիմ, դա... — Համբերե, ... գիմը ցուցամատե:— էս է»:

Հաջորդ ցուցական շարժույթն է «մատը մի բանի վրա դնել»: Առավելապես, բարձրի կողմից, առարկայի վրա է դրվում ցուցամատի առաջին փաղանգը: Շարժասողը մատը դնում ու փոքր-ինչ հպաղում է, և ինչպես ձեռքը դնելու դեպքում ստացվում է կարճատև կեցվածք, որն էլ զատորոշում է սռարկան: Հնչյունական լեզվում արտացոլված է մեկ տասնյակի շափ կաղապարներով՝ «մատը մի բանի վրա դնել» բառակապակցության զանազան տարբերակներով. մի քանի դեպքում «դնել» բայը փոխարինված է այլ բայերով՝ տանել, կպցնել: «Ուզում էի զբաղվել էջի մյուս նյութերով, երբ կողքիս հայտնված մեկը մատը մի անվան վրա դրեց.— Ես եմ,— ասաց: Տպադրված էր մի բանաստեղծություն, ստորագրությունը՝ Քաթուլ Հուրյան:— էս էլ ես եմ,— մատս ստորագրությանս վրա դնելով ասացի ես» (ԳԲ): Մատը մի բանի խփելով ցույց տալ՝ շարժասողը մատը ոչ թե դնում է առարկայի վրա, այլ ցուցամատով կամ եղունգով թխկացնում, կտսացնում է այն, դիպչում նրան, իսկ սաստկության ուժգին աստիճանի դեպքում դիմում վերը նըշված գործողությունների կրկնությանը՝ թխկախկացնում, կտկտացնում, մատ-

նահարում, ծեծում այն, այսինքն՝ կատարում է ցուցական մի երրորդ շարժումը: «... Աջ ցուցամատը շարժեց դեպի ձախ, ... կտրեց անցավ Ատլանտյան յվկիանոսը և կանգ առավ Բրազիլիայի Սան-Պաուլո քաղաքի վրա, ... եղունգով թխկացրեց.— Ասիկա Սան-Պավլոն է: Կրկին թխկացրեց.— Աս ալ Մոնտեվիդեոն է: ... Հայրիկս կրկին մատը թխկացրեց.— Աս ալ Բուենոս-Այրեսն է» (ԿՍ):

Շարժանքը սովորական է խանութներում, ուր ցանկանալով վաճառորդին ցույց տալ իրենց ուզածը, մատնահարում, մատով ծեծում են վաճառասեղանի ապակին՝ ապրանքի վերևում:

Նկատելի են տարբերությունների ու նմանությունների այն զուգահեռները, որոնք կարելի է անցկացնել ձեռքով և ցուցամատով կատարվող վերը ներկայացված երեքական շարժումների միջև: Վերջինները թեև առաջիններից տարբերվում են ձեռքի, թևի, մատների դիրքերով, շարժումների բնույթով, բայց կարծես առաջինների փոքրամասշտաբ փոփոխակները լինեն:

Գլուխ: Այս մարմնամասը հիմնական մասնակիցն է ցուցական երեք շարժումների, որոնցում, ճիշտ է, կարևոր դեր է խաղում նաև վիզը: Առաջին շարժումը. նայել մեկի (կամ մի բանի) կողմն ու գլուխը վեր բարձրացնելով՝ ձեռքը դարձնել անհրաժեշտ ուղղությամբ: Հաճախակի գործածվող այս շարժանքը լեզվի մեջ հիշատակվում է քսանհինգի շափ բառակապակցություններով. գլխի նշանով ցույց տալ, գլխի շարժումով ցույց տալ, գլխով անել դեպի մեկը (մի բան), գլխով մեկի (մի բանի) կողմը ցույց տալ, գլխով ցույց տալ և այլն: Օրինակներ. «— ... էս մանր ու մեծ կոմսոմոլները (ու գլխի նշանով ցույց տվեց մեզ)» (ՎԱ): «... Սերունին գլխի շարժումով ցույց տվեց մի փոքրիկ լուսանկար՝ պատի վրա: Իրոք նա նման էր մեծ բնագետին» (ՄԱ): «Իմ թիկունքում միլիցիոները գլխով էր անում դեպի ինձ և ասում էր կայաբանապետին.— Խմբագրությունում է աշխատում: Գնացքը մի ուղացրու, թե չէ թերթի մեջ կգցի» (ՀՄ): «Նրանց ավագը հարցական նայեց Աթարբեկյանին: Վերջինս գլխով ցույց տվեց անկյունում կանգնած կալանավորին ու հրամայեց. «Պահել մեկուսացված» (ՎՎ):

Շարժումը հիշատակելիս հաճախ հատկապես ուշադրություն է դարձվում գլխի վրա եղող այն մարմնամասին, որն ընդգծված դեր է կատարում: Դա, բնականաբար, ծնոտն է, որի դեպի ուր և ինչին ուղղված լինելու հանդամանքն է որոշում առանձնացվող օբյեկտը: Ուստի շարժանքն արտացոլող մի շարք բառակապակցություններում ամբողջի անունը փոխարինվում է նրա մի մասի անվամբ, և վերը նշված բայերի հետ «գլուխ» գերակա անդամի փոխարեն գործածվում է ղունչ, ծնոտ, կզակ հոմանիշներից մեկը: Ինչպես. «Կառապանը հայտարարեց՝ ձի չկա:— Հըր իսոնք ի՞նչ են,— ձիերին դնում ցույց տվի ես» (ՀԾՁՄ): «Հայտնվեց մի աժդահա: ... — Տար սրան,— Փոլադյանը լայն ծնոտով Հայկազին ցույց տվեց...» (ՔՔ): «— Քուլրիկ, քեզ եմ ասում,— Գիքորը կզակ արեց տարիքոտ կնոջը: Աղջիկների մայրը... նայեց...» (ՀՄ): Ծնոտն իր հերթին կարելի է ակնարկել մորուքով, իսկ «գլուխը» փոխարինել նաև «քթով» ինչպես Վ. Շուշանյանի ու Գ. Գեմիրճյանի երկերից ստորև բերվող մեջբերումներում: «Հարցուցի... և ծերուկին, թե ո՞ւր է քարը... — Այ, էնտեղ, բալամ,— ... ավելցուց՝ մորուքով ցույց տալով... լճին եզերքը...»: «— Դ՞նչ կա,— հարցրեց Զավենը:— Տես, ով է գալիս,— ասաց աղջիկը, մանրիկ քթով ցույց տալով... մի կերպարանքի կողմը...»:

Ծրկրորդ շարժումների դեպքում գլուխը (դեմքը, երեսը) պարզապես աջ կամ ձախ թեքելով, դարձվում է դեպի ցույց տրվելիք անձնավորությունը կամ առարկան: Շատ տարածված են այս՝ գլուխը դեպի մեկը (մի բան) դարձնել շարժանքի ուրիշ իմաստներ. 1. ուշադրություն դարձնել մեկի (մի բանի) վրա:

2. Խոսքը մեկին ուղղել, դիմել: 3. Զինվորական ողջույն տալ վերադասին: Համեմատաբար սակավ դեպքերում հանդիպում է նաև «ցույց տալ» նշանակությունը: Ինչպես օրինակ. «Մոտենում եմ դլխավորին:— Որտե՞ղ են հանձնում գրքերը... — Աա՛, — նոր ձեռագրերը... Գլուխը դարձնում է դեպի դիմացի դուռը:— Այնտեղ, ընկեր Չարենցին» (ԽՀ): «— Շնորհակալություն, քեռի Հայկ, դու իմ կյանքը փրկեցիր:— Աղջի, քեզ փրկողը ես չեի: Փրկիչդ հոն է:— Եվ գլուխը դեպի Հրայրը դարձրեց» (ՀՀ): «— Միացրու, տեսնենք, ինչ համերգ է,— քույրը դիմեց հարսին, գլուխը թեքելով անկյունում դրված հեռուստացույցի կուլմը: Հարսը սեղմեց կոճակը...» (ՄԳՐ, № 3, 1984):

Աչք, հոճ: Այս մարմնամասերը, որպես հիմնական մասնակից, կատարում են մեկական դիմախաղային ցուցական շարժույթ՝ աչքերով ցույց տալ, հոնքերով ցույց տալ: Առաջին դիմախաղ. նայել հաղորդակցին, ապա աչքերն արագ դարձնել այն անձնավորությանը կամ առարկային, որոնց վրա պետք է ուշադրություն հրավիրել, և այնուհետև նորից դարձնել հաղորդակցին: Երկրորդ դիմախաղ. հայացքն ուղղել անհրաժեշտ անձնավորությանը կամ առարկային, գլուխը փոքր-ինչ թեքել նույն ուղղությամբ և համապատասխան (աչ կամ ձախ) հոնքը թեթևակի բարձրացնել: Այս դիմաշարժերին են դիմում, երբ հարկ է լինում օբյեկտը ցույց տալ աննկատ, շրջապատից ծածուկ կամ դժգոհության, անհարգական և, ընդհակառակը, նրբանկատության ու այլ պատճառներով օբյեկտը պարզապես ակնարկել՝ երկու նպատակների համար էլ օգտվելով դեմքի մկանների շարժումների փոքրածավալ բնույթից: «Աչքերով ցույց տալը» լեզվի մեջ արտացոլված է նաև «աչքերով մատնացույց անել», «աչքով ակնարկել մեկին (մի բան)», «աչքով ցույց տալ» ու մի քանի այլ բառակապակցություններով: «Հոնքերով ցույց տալը, նաև՝ «հոնքերի շարժումներով (շարժումներով) ցույց տալ», «Հոնքի շարժումով մեկին (մի բանի) ակնարկել», «ունքերով նշաններ անելով ցույց տալ» ու դարձյալ մի քանի այլ բառակապակցություններով: Ըստ որում, այս դիմաշարժերը շատ հաճախ գործադրվում են միաժամանակ՝ հաղորդակցին նկատելի լինելու և իրազեկմանը խորհրդավորություն ու կարևորություն հաղորդելու համար: Համատեղ կատարվելու վերաբերյալ գործածվում են «աչքով-ունքով ցույց տալ», «աչքերով ու հոնքերով ցույց տալ», «աչքերով ու հոնքերով նշաններ անել դեպի մեկը (մի բան)»: Օրինակներ. «Գործակատարը հասկացավ... — Զի ծախվեր, Գարրիել աղա,— աչքերով մատնացույց անելով կտորը՝ արդարացավ նա,— շատ ղալբ ի...» (ԶԳ): «Շերամը երգն ավարտեց և Կարոյի ականջին ինչ-որ բան ասաց՝ աչքերով ցույց տալով հեռու նստած այցելուին: Գափահարն ուսերի շարժումով պատասխանեց, որ չի ճանաչում» (ՎՏ): «Այս խոսքերի հետ մեր աղջիկներն իրար աչքով են անում և հոնքերով դիմացի քարերն են ցույց տալիս: ... Նրանք քաջ գիտեն, որ հիշյալ քարերի հետևից... տասնավոր պատանիների աչքեր են տնկված իրանց կողմը» (ՊՊ): «... Տասը տուփ գլանակ դրեց նախագահի սեղանին... իսկ հեղկոմի նախագահը լուռ հետևում է... — Ի՞նչ բան է սա,— վերջապես հարցրեց նա,— հոնքի շարժումով տուփերի կույտն ակնարկելով» (ՎԱ):

Ոտք: Այս մարմնամասով կատարվում է երկու ցուցական շարժույթ: Մեկի վրա կանգ կառնենք ավելի ուշ, իսկ մյուսին՝ որ է «ոտքով ցույց տալ», կանդրադառնանք այստեղ: Շարժույթը խիստ կանոնաբեկված չէ. ոտքը առաջ մեկնել և ոտնաթաթն ուղղել ցույց տրվող առարկային: Թաթը գետնից կարելի է չկտրել, մանավանդ եթե առարկան ընկած է գետնին կամ փոքր-ինչ բարձրացնել, եթե մանավանդ, առարկան ոչ մեծ բարձրության վրա է: Առօրյայում համեմատաբար քիչ հանդիպող շարժույթներից է և հնչյունական լեզվում արտացոլված է մի քանի բառակապակցությամբ: Օրինակներ. «— Սը-

րանք ի՞նչ ճեղքեր են,— ոտքով ցույց տվեց նա մայթի քարերի լայն արանքները» (ՍԶ): «Նրանցից մեկը... ոտքով ցույց տալով գետինը, ասաց.— Զենոն, ինչեր կան էստեղ...» (ԱԱ):

Մինչև այժմ ներկայացված շարժույթները կատարվում էին բացառապես մարմնի մասերի մասնակցությամբ: Սակայն երկու ցուցական շարժույթի կատարման մեջ կարևոր դեր են խաղում նաև առարկաները: Կանգ առնենք դրանց վրա առանձին-առանձին:

Առաջին շարժույթն ունի երկու տարբերակ, որոնցից մեկում, իբրև ցույց տալու միջոց, գործադրվում է ձեռնափայտը, որն ուղղվում (պարզվում, մեկնրվում) է մեկի (մի բանի) կողմը (դեպի մեկը կամ մի բան). մյուսում գործադրվում է ցուցափայտը, որի ծայրը մնում է փոքր հեռավորության վրա ցույց տրվող օբյեկտից (քարտեզ, հատակագիծ, ժամացուցակ և այլն) կամ վերջիններիս վրայով սահեցվում՝ անհրաժեշտ կետին համապատասխան: Զեռնափայտը մեծացնում է ձեռքով ցույց տալու պլանը, ուստի հարմար է հեռու առարկաների զատորոշման համար: Ցուցափայտը մեծացնում է թևի ֆիզիկական հնարավորությունը՝ երկարության իմաստով, և հարմար է մոտ օբյեկտներ ցույց տալու համար, որովհետև դրանք կրողները հիմնականում կախված են լինում պատից: Շարժույթն արտացոլող բառակապակցություններում, որոնց թիվը հասնում է գրեթե մեկ ու կես տասնյակի, «ձեռնափայտ» հիմնական բառի փոխարեն, իբրև գերակա անդամ, հանդես են գալիս նաև «գավազան», «մահակ», «փայտիկ» և այլ հոմանիշներ. «Ծրեաց Շիրվանզադեն... Գորկու ընկերակցությամբ: Շիրվանզադեն... ձեռնափայտը պարզեց դեպի ինձ և ասաց.— Ահա մեր հերոսը... Գորկին նայեց ինձ» (ԳՄ): «Հասմիկը պատրաստվում էր դուրս գալ, բայց Իսահակյանը ձեռնափայտով ցույց տվեց աթոռը, ինքը դուրս եկավ սենյակից» (ԴՂ): «Ռաֆայել՝ ... Կբերեք էստեղ: (Վեր է կենում, մոտենում կոմբինատի սխեմային և ցուցափայտով ցույց տալիս): Կմտնեք հիմնական մուտքից: Ավտոն կկանգնեցնեք այ, էստեղ» (ՊԶ):

Երկրորդ ցուցական շարժույթը, որի կատարմանը առարկաներ են մասնակցում, նաև ցուցադրական է: Դրանով շարժասողը ի ցույց է հանում, ներկաների հատուկ ուշադրությունը հրավիրում առարկայի, նրա այս կամ այն հատկանիշի վրա, որ շարժույթի առաջին իմաստն է, ինչպես նաև առարկայի նկատմամբ արտահայտում իր ակտիվ վերաբերմունքը՝ հարգանք, հպարտություն, համակրանք, ուրախություն, նաև հակակրանք և այլն, որը երկրորդ իմաստն է: Եթե վերը ներկայացված շարժույթի դեպքում գործադրվող առարկաները որոշակի էին՝ ձեռնափայտ, ցուցափայտ, ապա այժմ շարժասողը կարող է գործ ունենալ ցանկացած ոչ մեծ առարկայի հետ: Այս ցուցական շարժույթը կատարվում է չորս տարբերակով: Առաջին տարբերակում շարժասողը, զգացմունքներին ու պայմաններին համապատասխան, թեև մասամբ կամ ամբողջովին բացելով կրծքի կամ դեմքի մակարդակին, առարկան բռնած ձեռքը պարզում է առաջ, առժամանակ անշարժ պահում օդում: Մեծ հաճախականության շարժույթ է, ձեռքի ամենօրյա, սովորական դիրք՝ ձեռքն առժամանակ անշարժ մնում է օդում: «Կարճ լուսնունից հետո հարցրեց ժրպտալով.— Իսկ իմ թաշկինակը՞... Պատասխանելու տեղ, նույնպես ժպտալով, յոցիցս հանեցի նրա նվիրած թաշկինակը, որ պահում էի մաքուր թղթի մեջ փաթաթած, առանց բանեցնելու, ցույց տվի և դարձյալ ծոցս դրի» (Ն): «Գեղազործը նամակը բարձրացուց օդին մեջ... — Տիկին նվարդ,— նայե... Տեսա՞ր... Սերգոյէս նամակ առի... ու իր դողդոջուն ձեռքը... թուղթի փոքրիկ կտորի մը կառչած երախտագիտորէն, դեռ երկար պահ մը բարձրը մնաց յաղթական...» (ՍԹ):

Երկրորդ տարբերակում շարժասողը, դարձյալ զգացմունքներին համա-

պատասխան, թե՛ր մասնակի շահով կամ լրիվ բանալով, ձեռքը բարձրացնում է գլխից վեր, առժամանակ անշարժ պահում օդում. առարկան ներկայացվում է բարձրից: «... Ներս մտավ... ցրիշը: Գլխից բարձր բռնելով մի ծալած թուղթ՝ գիլ գոռաց.— Ընկեր Սարոյան, հեռագիր ունե՞ք» (ԲԹ):

Ի տարբերություն նախորդ տարբերակի, որ կեցվածք էր, վերջին երկուսը շարժանք են: Երրորդ տարբերակում շարժասողը թափահարում (տարուբերում, նոճում) է առարկան՝ ձեռքը բարձրացնելով դեմքի մակարդակին կամ գլխից վեր: «— Սրինգ... սրինգ... էժան կտամ, գնացքից ուշանում ենք, ... սրինգ... — գլխից վերև բարձրացնելով գործիքը տարուբերեց Եղիշը» (ՄՄ): «Եսփիմէ.— ... Ձէի ուզեր հավատալ, բայց հիմա բոլոր տարակույսներս փարատեցան: (Թերթը ճոճելով): Ահա փարատիշը» (ՄԿ):

Զորրորդ տարբերակում շարժասողը, ձեռքով օդում շրջաններ գծելով, գլխավերևում պտտեցնում է առարկան:

Շարժույթը լեզվի մեջ արտացոլված է քսանի շափ բառակապակցություններով, որոնց մի մասը հիշվեց վերը, գրականությունից արված մեջբերումներում: Մնացածներից են. գլխից վեր բարձրացնել որևէ բան, գլխից վեր բռնել, ծածանել (թուղթ, գրություն և այլն), երերցնել որևէ առարկա, մի բան օդում թափահարել, գլխավերևում որևէ առարկա պտտեցնել:

Պետք է նկատել, որ որևէ առարկա բռնած լինելու դեպքում, «ձեռքով ցույց տալ» շարժանքը կատարելիս, դեպի զատորոշվող օբյեկտն են մեկնում ոչ միայն թե՛ր, այլև, բնականաբար, բռնած առարկան: Սակայն վերջինիս այսպիսի մասնակցությունը շարժասութայնը հարկադրական պայման է և ոչ կանոնական:

Եվ այսպես, մենք կանգ առանք այն հիմնական միջոցների՝ մարմնամասերի, առարկաների վրա, որոնցով իրականացվում են խնդրո առարկա շարժույթները: Այժմ մենք պետք է քննենք, թե շարժասողը դրանցով հատկապես ինչ է ցույց տալիս: Ըստ գործառնությունից ցուցական շարժույթները կարելի է բաժանել հետևյալ տիպերի. ա) առարկա, բ) անձնավորություն, գ) տարածություն, տեղ, դ) ուղղություն ցույց տվողներ: Ըստ որում, մի մասն ունի մեկ պորժառնություն, ուրիշները՝ մի քանի: «Ձեռքով ցույց տալ», «մատով ցույց տալ», «գլխով ցույց տալ», «գլուխը դեպի մեկը (մի բան) դարձնել», «գավազանը, ձեռնափայտը մեկի (մի բանի) կողմն ուղղել» շարժույթներն, օրինակ, որոնց մասին արդեն խոսել ենք, կարող են հանդես գալ բոլոր շորս գործառնությամբ, «ձեռքում բռնած առարկան թափահարել (տարուբերել) կամ գլխավերևում պտտեցնել» շարժանքները՝ միայն առարկա ցույց տալու գործառնությամբ, որին նույնպես անդրադարձել ենք: Անձնավորություն ցույց տվող շարժույթներից այստեղ կնշենք միայն նրանք, որոնք ուրիշ ցուցական գործառնություն չունեն. այն է՝ ձեռքը մեկի ուսին դնել, ուսը բռնել, ուսին խփել, ցուցամատով ուսը հրել, մեկի ձեռքը վեր բարձրացնել, մեկի ծոճրակին խրփել: Ինչպես տեսնում ենք, առաջին շորս շարժույթների մեջ անձնավորությամբ ներկայացնելու մեջ դեր է խաղում «ուս» մարմնամասը, որ տարածված հանգամանք է: «Ձեռքը մեկի ուսին դնել» կեցվածքը ունի նաև երկանդամ կատարում, ուրեմն կարող է լինել և սաստկություն ուժգին աստիճանում՝ «ձեռքերը մեկի ուսերին դնել»: Արտացոլող մյուս բառակապակցություններում, որոնց թիվը հասնում է տասնհինգի, «ձեռքը» կարող է փոխարինվել «ափ» լատիներով, իսկ «դնել» բայը «իջնել», «զգալ» բաղադրիչներով: «Ներսիսյանը ծիծաղեց:— Դուք էլ հավատացի՞ք, թե... բաց կանեմ գաղտնի՞քս: ... Ուրիշ էր, եթե Սաղաթելի,— ձեռքը դրեց ուսիս,— այ, էս ընկերոջս պես գաղտնիք պահել իմանալիք» (ԳԲ):

Նույն՝ «այս անձնավորությունը, սա» իմաստն արտահայտելու համար

ընդունված է նաև բռնել ներկայացվող հաղորդակցի ուսը կամ ուսերը: «— Ահա,— Արշոյի ուսը բռնելով, շարունակեց Սերոբը,— այս հիանալի տրեւան... պրոֆեսորին ասել էր փողոցի անունն ու տան համարը» (ՎՏ):

Սակավ դեպքերում դործածվում է «ձեռքը մեկի ուսին խփել» կատակալին շարժանքը. «— Մեղքը քոնն է, աղջիկս... — ասաց կառապանը:— Այ, սեծ մեղավորը,— ձեռքը Վիրապի ուսին խփեց Վրթանեսը,— աղջիկը ի՞նչ մեղք ունի» (ՎԳ): «Ուսը հրել» շարժույթը կիրթ չէ և անխրախուսելի է. ընդունելի է, թերևս, կատակի ու զվարճության դեպքում: Առավելապես գործածվում է տարիքավորի կողմից փոքրահասակի, հասարակական բարձր աստիճանակարգում եղողի կողմից ցածր աստիճանակարգում եղողի նկատմամբ կամ բացասական վերաբերմունքի դեպքում: «— Հրես սա,— և տատը հրեց Բոռան՝ Աշոտի ուսը,— տանը քրեղան, խեցատ չի թողել՝ մեջը հող է լցրել, էորիզ ցանել, թե ծառ եմ հասցնում» (ՍԶ):

Կատակալին է դարձյալ «ծոծրակին խփելով ցույց տալ» շարժույթը, ուստի և ոչ հաճախ գործածական. «—էս քո աղև՞ն է,— հարցրեց Մինասը Սարգիս Վարդունուն, Արգամի ծոծրակին ամուր խփելով,— ... էսօրվանից իմ աղեն է» (ՀՔ):

Միայն անձ ցույց տվող վերջին՝ վեցերորդ, շարժույթն է՝ «մեկի ձեռքը (թևը) բարձրացնել»: Ընդգծված կերպով շրջապատի մարդկանց ներկայացնելու, ցույց տալու նպատակով՝ հաղորդակիցներից մեկը ուսից բարձրացնում է մյուսի աջ ձեռքը (թևը), որն առժամանակ մնում է զլխավերևում պահված կեցվածքում: Հետագայում այս իմաստից է առաջ եկել «մեկին հաղթող, մրցության մեջ առաջինը հռչակել» իմաստը:

Ընդարձակ տարածություն, շրջանակի մի հատված ցույց տվող շարժույթներից կվերցնենք առավել հետաքրքրական երկուսը, որոնց այլ առիթներով չենք անդրադարձել՝ «գիրկը բացելով ցույց տալ» և «ձեռքի լայն շարժումով ցույց տալ»: Առաջինի դեպքում բազուկները լայնորեն բացվում են աջ ու ձախ, պարզվում առաջ ու պահվում կիսաշրջանաձև (ափերն ուղղված են միմյանց), կարծես անհրաժեշտ է մի մեծածավալ բան գրկել: Այս կեցվածքը «գիրկը բացել» (1. տրամադրված լինել գրկելու, 2. ջերմ, ուրախ, ոգևորված վերաբերմունք արտահայտել) շարժույթի երրորդ իմաստն է, որն իր նախորդներից անհամեմատ սակավ է հանդիպում թե առօրյայում, թե լեզվական ձևերում: Բերենք օրինակներ Մ. Գալշոյանի «Բովտուն» վեպից, ուր գործող անձինք մի շարք անգամ դիմում են այս կեցվածքին: «— Բագրատ,— Սանթրոն քաշեց գործընկերոջ փեշը,— պատկերացրու էսպես մեր գեղը,— ... գրկեց բրիգադի սահմանը,— գեղի թիկունքին էս սարերը... կան...»: «— Ե՛րբ ես բրիգադն ընդունելու... որ՝ դու լինես, էլ դիրեկտոր-միրեկտոր գոյություն չունի... մերն է,— Վարոսը գրկեց բրիգադի այգիները»: «— Ծիծաղում է, լացի փոխարեն ծիծաղում է, հա:— Դիրեկտորը թևերով գրկեց Բովտունը,— մի աշխարհ քար կա մեջը, ո՞վ պետք է հավաքի»:

Նույն գործառութայնամբ երկրորդ շարժույթի դեպքում շարժասողը մեկ կամ երկու ձեռքով օդում կիսաշրջան կամ շրջան է գծում՝ շարժման մեջ ընդգրկելով համապատասխանաբար շրջապատից անջատ որոշակի մի տարածություն կամ ցույց է տալիս շորս կողմը, շրջակայքը: Ի դեպ, այս կերպ են ցույց տրվում նաև մարդկանց և առարկաների խմբերը՝ «այս ամենը, բոլորը» իմաստով: Բուն ցուցական շարժանք է, և հարկ է անդրադառնալ դրա արտացոլման լեզվական ձևերին, այն է՝ քսանհինգի շափ բառակապակցություն: Դրանցում որպես գերակա անդամ հանդես է գալիս «ձեռք» բաղադրիչը՝ համադրվելով հիմնականում «ցույց տալ», «շրջան գծել» հարադիր բայերի հետ, մյուս բաղադրիչները զանազան մանրամասներով բնութագրում են շարժումը. երկու

ձեռքով օդում շրջան գծել, ձեռքը կիսաշրջան գծել, ձեռքը տարածելով շրջան գծել, ձեռքով շրջան գծել, ձեռքով օդում շրջանակ գծել, ապա նաև. ձեռքի լայն շարժումով շորս կողմը ցույց տալ, ձեռքի շարժումով շորս կողմը ցուցնել, ձեռքի լայն շարժումով ցույց տալ: Կան նաև մի քանի այլ կարգի կառույցներ, որոնց մեջ՝ գոյականականներ. ձեռքը շորս կողմը պտտեցնել, ձեռքի շարժումով որևէ տարածություն ընդգրկել, ձեռքի լայն շարժում, ձեռքի տարածական շարժում: Օրինակներ. «Ծրք անտառն էինք մտնում, ... կանգ առավ, ... ձեռքը տարածելով մեծ շրջան գծեց օդում ու ասաց ինձ.— Հրես, այ սա ա Մելիքի գավթած հողը...» (ՎՓ): «— Որքեր ամեն տեղ կան, ըսավ ծերունի քահանա մը՝ ձեռքի լայն շարժում մը ընելով և ցուցնելով հրդեհված քաղաքին շորս կողմը... Գացեք հիվանդանոցները, գացեք դեպի վրանները...» (ԶԵ): «Ձեռքն արևին դեմ անելով՝ նայեց իր շուրջը:— Ի՛նչ թաքցնեմ, այս տեսարանն ինձ դուր է գալիս,— նա ձեռքի լայն շարժումով ցույց տվեց դաշտը» (ՍԽ):

Գործողության կատարման, առարկայի գտնվելու վայրի առիթով կամ այլ առիթով ավելի փոքր տարածություն, որոշակի տեղ ցույց տալիս նույնպես գործածվում են այլ դեպքերի համար նախատեսված շարժույթներ: Առանձնահատուկն այստեղ «ոտքը թեթևակի գետնին խփել, ոտքով գետնը թփթրփացնել» ցուցակն շարժույթն է², որով գետնի վրա առանձնացվում, նշվում է կոնկրետ մի տեղ: Նկարագրելիս գործածվում են նաև «ոտքով հողը ծծծել», «ոտքով կանգնած տեղը ծծծել», «ոտքով հատակին դոփել», «ոտքը թփթփացնել» ու մի քանի այլ նման բառակապակցություններ: «— Գերասիմ,— ... կառապանը լարեց ուշադրությունը:— Այստեղ... — ու թեթևակիորեն ոտքը խփեց գետնին: ... Օրին կանգնած էր հայացքը գետնին, ուր խփել էր ոտքը... — թող գերեզմանիս հասնեն բախտ գտած հայերի ոտնաձայները:— Այստեղ... — նորից ոտքը խփեց գետնին» (ՍԱ): «— ... Գնացեք նախագծի հեղինակի մոտ: Եթե նա թույլ տա՝ խնդրեմ: Ինձ կարգադրել են խճուղին այստեղով (ոտքով դոփում է հատակին) տանել, ես խճուղին այստեղով պիտի տանեմ: Հասկանում եմ, երեսուն տարի կառուցել եք...» (ԶԽ): «Ծաղիկը հեշտ լարողանում է ծլիկել Իսահակի գրկից: Հիմա ավելի արագ է վազում և կանգնում է միայն կամուրջի մոտ.— Կիրակի օրը, երբ կերևան առաջին աստղերն, այստեղ,— ոտքով ծծծում է կանգնած տեղն ու փախչում» (ՍԱ): Օրինակներում գաթոռը անձի ք շարժույթով ցույց են տալիս համապատասխանաբար գերեզմանի տեղը, խճուղու անցկացման տեղը, ժամադրության վայրը:

Ձուտ ուղղության գործառնություններ շարժույթներ շուրջնա, ինչպես ունենինք նախորդ երեք դեպքերի համար: Եվ ընդհանրապես, ցուցական շարժույթների միայն մեկ քառորդն է, որ այլ գործառնություններով հանդերձ ցույց է տալիս նաև ուղղություն: Դրանցից են. ձեռքով ցույց տալ, մատով ցույց տալ, մատը դեպի վեր պարզել (տնկել, մեկնել), գլխով ցույց տալ, գլուխը դեպի մեկի (մի բանի) կամ որևէ կողմ դարձնել, ձեռնափայտը որևէ ուղղությամբ պարզել (մեկնել): Ինչպես. «Արամը գլուխը բարձրացրեց և ծնոտը մեկնեց տուաչ:— Արդեն մոտենում ենք: ... Հրե՛ գնացքը... Բուրբեր նայեց նրա ցույց տված ուղղությամբ» (ՍԶ): «Սերոբ Աղբյուրը ինձ մի կոտրած հրացանի կոթ տվեց, որ տանեմ նորոգելու:— Վարպետ Շապինին կտաս,— ասաց ու ձեռքով

² Չպետք է շփոթել ոտքը (ոտքերը) գետնին խփել (զարկել) շարժույթի հետ, որը ծագումով հուզական է, ցուցական չէ և կատարվում է այլ կերպ. մերթ օր օր ձախ ոտքը թափով իջնում է գետնին, որից մարմինը ցնցվում է, առաջ ու հետ նետվում: Իմաստներն են. 1. Տագնապել, հուզվել, անհամբեր վիճակում լինել: 2. Բարկաճալ, գայրաճալ: 3. Հրճվել, ուրախաճալ:

ցույց տվեց իմ գնալիք տեղը Տալվորիկի ուղղութեամբ: «Կարող եմ նաև Տալվորիկ գնալ» (ԽԴ):

Գրեթե բոլոր ցուցակաւն շարժույթներն ուղղված են դեպի առաջ և ցույց են տալիս առջևում եղող օբյեկտներ, բացառութեամբ երկու շարժանքի՝ «գըլ-խով հետ ցույց տալ», և «բթամատով հետ ցույց տալ»: Վերջիններս բացառիկ տեղ են գրավում խնդրո առարկա շարժույթների շարքում, քանի որ ուղղված են դեպի հետ՝ ցույց են տալիս հետևում եղող օբյեկտներ: Առաջին շարժանքի պայքում գլուխը, տեղագրութեանը համապատասխան, կտրուկ շարժումով կիսաշրջվում է դեպի հետ՝ դեպի աջ կամ ձախ ուսը: Արտացոլված է մի քանի բառակապակցութեամբ: Եթե դեպի առաջ, առաջակողմում եղածը ցույց տալու համար գործադրվում է ցուցամատը, ապա հետևակողմի համար՝ բթամատը. ուսի վրայով բութ մատը ուղղվում է դեպի հետ, մյուս մատները փակվում են, թևը ծալվում է արմունկից: Շարժանքն արտացոլված է մեկ տասնյակից ավելի բառակապակցական տարբերակներով. որպես գերակա անդամ հանդես են գալիս «բթամատ», «բութ մատ» բաղադրիչները՝ համադրված «շարժել», «տնկել», «ցույց տալ», «պարզել», «տանել» ու մեկ-երկու այլ բայերի հետ. մյուս բաղադրիչները, հատկապես «ուսը», որը կա գրեթե բոլոր բառակապակցութեաններում, նշում են շարժման մանրամասներ. «Բթամատը սեփական ուսի վրայով դեպի ետ պարզել», «բթամատով ուսի վրայով դեպի ետ ցույց տալ», «բութ մատը դեպի ետ տնկել», «բութ մատը մեջքի ետևը տանել», «բութ մատով ուսի վրայից ետ ցույց տալ»:

— Այդ որտեղի՞ց, — հարցրեց Հայկը: Ես բութ մատով ուսիս վրայից ետ ցույց տվի: — Դեպի ո՞ւր, — նորից հարցրեց Հայկը: Ես ցուցամատս ուղղեցի դիմացի կողմը» (ՎԳԲ): «Հակոբյան, գնա Գինոսյանին բեր, — և բթամատը շարժեց ուսից վեր, հակառակ կողմը, դեպի գլուղ: — Ընկեր Ջամալյան, մեքենայով գնամ» (ԲԹ):

Երրորդ և չորրորդ ուղղութեանները՝ դեպի վերև ու դեպի ներքև, դարձյալ ցույց են տրվում ցուցամատի միջոցով. աջ ձեռքի ցուցամատն ուղղվում է դեպի վեր, մյուս մատները ծալվում են, թևը շարժվում է վարից վեր. հակադարձը՝ աջ ձեռքի ցուցամատն ուղղվում է դեպի ցած, մյուս մատները ծալվում են, թևը շարժվում է վերից վար: Երկուսն էլ արտացոլված են մի քանի բառակապակցական տարբերակներով. «Միջին հարկերում վերելակը կանգ առավ, գոնակները բացվեցին. դրսում կանգնած մեկը հարցական նայեց ներքան: Մովսեսը մատը վեր տնկեց, իբր՝ բարձրանում եմ: Մարդը գլուխը բացասաբար շարժեց» (ԶԽ): «Նշան արի, որ շխտսի ու մատս մեկնեցի ցած: Տեսավ որսն ու... աչքերը պսպղացին» (ՎԱ):

Վերը շարադրվածից կարելի է նկատել, որ ցուցակաւն շարժույթների մի մասը կատարելիս անմիջական շփում է տեղի ունենում ցույց տրվող օբյեկտների հետ: Շարժասողը ձեռքը կամ մատը դնում է առարկայի վրա, խփում դրան, թափահարում, զլխավերևում պտտեցնում, ձեռքով, մատով, ոտքով թխթխացնում կամ թփթփացնում այն: Այսպես է նաև բացառապես անձնավորութեանը ներկայացնելու համար նախատեսված շարժույթների դեպքում, որոնք, ինչպես տեսանք, իրականացվում են մեկի ձեռքը վեր բարձրացնելու, ձեռքն ուսին դնելու, ծոծրակին խփելու, ուսերը բռնելու, ուսը թփթփացնելու, դուցամատով ուսը հրելու միջոցով: Ցուցակաւն շարժույթների համեմատաբար ավելի մեծ մասի դեպքում անմիջական շփում տեղի չի ունենում օբյեկտների հետ, որովհետև շարժասողը դրանք ցույց է տալիս ավելի կամ պակաս տաթաթութեանից. ձեռքը, ցուցամատը, ձեռնափայտը, բթամատը ուսի վրայով մեկնում է դեպի զատորոշվող առարկան կամ անձը, զլխով ցուցակաւն շարժումներ է կատարում դեպի առաջ, կողք ու հետ դեպի ուսը և այլն:

Աչքերով, հոնքերով, ոտքով հնարավոր է ցույց տալ համեմատաբար փոքր հեռավորության, իսկ ձեռքով օդում շրջան գծելով, գիրկը բացած՝ պարփակող, ընդգրկուն բնույթի պատճառով, ամենից ծավալուն և առավելագույն հեռավորության օբյեկտները:

Եթե ներկայիս վարվեցողության կանոններով միջին հեռավորության ու խոշոր առարկաները մատով ցույց տալը համարվում է ոչ խրախուսելի, ապա փոքր հեռավորության ու մանր օբյեկտները ցուցամատով նշելը համարվում է անհրաժեշտ և նպատակահարմար: Նույն կերպ խրախուսելի չէ ձեռքն առաջ պարզելով անհրաժեշտ անձնավորությանը ներկայացնելը, մինչդեռ նույն նըպատակով ափը դեպի նա ուղղելը կիրթ է ու հարգալից: Մեծ հեռավորության դեպքում կամ շարժասողը բուռն, հուզական վիճակում լինելիս շարժումներն ավելի մեծ պլանի են. շարժույթները կատարվում են թափով, եռանդուն: Օրինակ՝ ձեռքով կամ մատով ցույց տալիս թևը պարզվում է ուսից, բացվում ամբողջովին: Մոտ առարկաների դեպքում մանավանդ, երբ շարժուձևը կիրթ է ու զուսպ, շարժումների պարագիծը փոքր է, շարժույթները կատարվում են մեղմորեն, ասենք, առաջ է պարզվում ոչ թե ամբողջ թևը, այլ նախաբազուկը:

Երբ ցուցական շարժույթները հանդես են գալիս հարալեզվական գործառնությանմբ, համադրվում են բանավոր խոսքին, ցույց տալու գործողությունների հետ մեկտեղ գործածվում են նաև ցուցական դերանուններ, անձի և առարկայի դեպքում՝ այս, այդ, այն, սա, դա, նա, տարածության և տեղի դեպքում՝ այստեղ, այդտեղ, այնտեղ, ուղղության դեպքում՝ այսպես, այդպես, այնպես: Ցուցական շարժույթները առնվում են միայն տարածական հարաբերությանմբ, շունեն ժամանակային կիրառություն, ուստի դրանց ուղեկցող ցուցական դերանուններն առնվում են տարածական հարաբերությանմբ, օբյեկտը շարժասողին կամ հաղորդակցին մոտ լինելու դեպքում համապատասխանաբար առաջին կամ երկրորդ դեմքով, շարժասողից ու հաղորդակցից հեռու լինելու դեպքում՝ երրորդ դեմքով. «Ո՛վ է այս մարդը (շարժասողը ցույց է տալիս), ո՛վ է այդ մարդը, ո՛վ է այն մարդը»: «Դի՛ր այստեղ (շարժասողը ցույց է տալիս), դի՛ր այդտեղ, դի՛ր ահա այնտեղ): «Կգնաս այսպես, հետո այսպես...»: «Գնա այդպես, ահա այդպես...»: Երբ ցուցական շարժույթներն իրենց մեջ են ներառում առարկաների ընդհանրություն կամ դրանց քանակական ամբողջություն, համադրվում են ամենքը, ամբողջը, բոլորը որոշյալ դերանունների հետ, քանի որ վերջիններս նույն ընդհանրությունն ու ամբողջությունն են մատնանշում: Սա հատկապես վերաբերում է «ձեռքի լայն շարժումով օդում կիսաշրջան (շրջան) գծել» շարժանքին և «գիրկը բացած որևէ տարածություն ցույց տալ» կեցվածքին, որոնք ընդգրկուն, պարփակող բնույթ ունեն: «Զոքանչն ապացուցեց, որ ... հասկանում է, թե այս պահին ինչ է մտածում փեսան: «Հա,— ասաց,— մի գարմանա: ... Գյուղերում էլը ցեխից հանելով էլ յուր կգնաս: Չկարծես մենակ ես եմ էդպես մտածում: Բոլորը»,— «Զոքանչը ձեռքով մի լայն շարժում արեց» (ՎԳԲ):

Ցուցական շարժույթները կոնկրետացնում են ցուցական դերանունների ընդհանրական-վերացական իմաստը, բացորոշելով, թե խոսքը հատկապես ինչի՞ն, ո՞ւմ, ո՞ր տեղին է վերաբերում: Առանց դրանց գործածության նախադասությունն աղճատվում է և իմաստազրկվում, քանի որ դերանուններն ինքնին պահանջվող իրազեկումը չեն պարունակում: Շարժասական բացորոշման շնորհիվ խոսողը համառոտում է խոսքը, տնտեսում ժամանակը, լրացում նախադասության գրոյակա՛ն մասը, որն առաջ է գալիս ասելիքը կարճելու, շարունակել չկարողանալու, կրկնություններից խուսափելու և այլ պատճառներով: Եթե ինչ-ինչ հանգամանքներում շարժասել հնարավոր չէ կամ հաղորդակիցը շարժասումը չի ընկալում, ապա համասեռ առարկաների շար-

քում անհրաժեշտն առանձնացնելու համար խոսողը հարկադրված է լինում տեւականորեն նկարագրել վերջինիս տարբերիչ հատկանիշները, գտնվելու ճշգրտ տեղը, նկատելու և գտնելու խանգարող հանգամանքներն ու այլ մանրամասներ: Երկխոսությունների ժամանակ հաճախ հաղորդակիցներից մեկը դիմում է բանավոր խոսքին, իսկ մյուսը կարձ, արագ ու պարզորոշ պատասխանելու համար դիմում է շարժաստվյանը: Այսպիսի հարց ու պատասխանները բնորոշ են գնորդ-վաճառող, զբոսավար-զբոսաշրջիկ, պարուսույց-պարող, մարզիչ-մարզիկ, առտնին աշխատանքներում՝ հայր (մայր) — երեխա և ման կարգի այլևայլ զույգերի:

Ամփոփինք: Հոգվածում ներկայացված է հայոց մեջ ընդունված 27 ցուցական շարժույթ, որոնցից 18-ը շարժանք է, 7-ը՝ կեցվածք, 2-ը՝ դիմախաղ, 1-ը՝ մարմնաշարժում³: Մարմնամասերից ցույց տալու հիմնական գործառնությունը կատարում են. ձեռքը՝ 12, ցուցամատը՝ 6, գլուխը՝ 3, ոտքը՝ 2, բթամատը՝ 1, աչքերը՝ 1, հոնքերը՝ 1 շարժույթի դեպքում: Հարաբերականորեն երկրորդական, կարևոր դեր չեն խաղում թևը և ուսը, առաջինը՝ 20, երկրորդը՝ 4 շարժույթի կատարման մեջ: Առարկաներից որպես ցույց տալու հիմնական միջոց են ծառայում ձեռնափայտը և ցուցափայտը: Ցուցական շարժույթները կոչված են շրջապատից առանձնացնելու առարկա, անձ, տարածություն, ուղղություն: Իրանց մի մասի դեպքում տեղի է ունենում անմիջական շփում շարժասուղի և օբյեկտի միջև, համեմատաբար ավելի մեծ մասը կատարվում է որոշակի հեռավորությունից: Բանավոր խոսքն ուղեկցելիս ցուցական շարժույթները համադրվում են ցուցական դեբանունների հետ՝ կոնկրետացնելով ու բացահայտելով վերջիններիս վերացական իմաստը:

Ստորև բերում ենք հայոց մեջ ընդունված ցուցական շարժույթների ցանկը՝ հետևելով դրանք արտայտող բառակապակցությունների առաջին բաժնի այբբենական կարգին: Աչքերով ցույց տալ (դ.), առարկան ցուցադրել այն խափահարելով կամ գլխավերևում պտտեցնելով (շ.), և կամ առաջ պարզել (կ.), ափը դեպի մեկը պարզել (շ.), բթամատն ուսի վրայով դեպի հետ մեկնել (շ.), գիրկը բացելով որևէ տարածություն ընդգրկել (կ.), գլխով առջևում ևղաժը ցույց տալ (շ.), գլխով ուսի վրայով դեպի հետ շարժում անել, գլուխը դեպի մեկը (մի բան) դարձնել (շ.), հոնքերով ցույց տալ (դ.), ձեռնափայտով (ցուցափայտով) ցույց տալ (շ.), ձեռքը մեկի ուսին դնել (կ.), ձեռքը մի բանի խփել (թխթխկացնել — շ.), ձեռքը որևէ առարկայի վրա դնել (կ.), ձեռքն առաջ պարզելով ցույց տալ (շ.), ձեռքով լայն շարժում գործելով օդում կրնաշրջան կամ շրջան դծել (շ.), մեկի ծոծրակին խփել (շ.), մեկի ձեռքը (թևը) բարձրացնել (կ.), մեկի ուսերը (ուսը) բռնել (կ.), մեկի ուսին խփել (թփթփուցնել — շ.), ոտքը թեթևակի գետնին խփել (գետնինը թփթփուցնել — ձ. ՝), ոտքն առաջ տանելով ցույց տալ (շ.), ցուցամատը ներքև պարզել (շ.), ցուցամատը որևէ բանի վրա դնել (կ.), ցուցամատը վեր պարզել (շ.), ցուցամատն առաջ պարզելով ցույց տալ (շ.), ցուցամատով մեկի ուսը հրել (շ.), ցուցամատով որևէ բանի խփել (թխթխկացնել — շ.):

ՀԱՄԱՌՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԱԱ— Աղասի Այվազյան
ԳՄ— Գուրգեն Մաճարի
ԳԶ— Գուրգեն Զանգրեկյան

ԳՍ— Գառնիկ Ստեփանյան
ԳՍՈՒ— Գաբրիել Սունդուկյան
ԳՏԳ— Գրիգոր Տեր-Գրիգորյան

³ Պետք է հաշվի առնել, որ «առարկան ցուցադրել» շարժույթի տարբերակներից երկուսը շարժանք է, իսկ մեկը՝ առարկան առաջ պարզել՝ կեցվածք:

գ.— դիմախաղ
 ԴՂ— Դոնարա Ղարագոյոյան
 ԵԾ— Երվանդ Օտյան
 ԶԴ— Զարգանդ Դարյան
 ԶԵ— Զապել Եսայան
 ԶԽ— Զորայր Խալափյան
 ԹԺՀ— Թումանյանը ժամանակակիցների հուշերում
 ԽԴ— Խաչիկ Դաշտենց
 ԽԶ— Խաչիկ Հրաչյան
 Կ.— կեցվածք
 ԿՍ— Կարպիս Սուրենյան
 ՀԵԶՄ— Հուշեր Եղիշե Զարենցի մասին
 ՀՀ— Հրանտ Հրահան
 ՀՄ— Հրանտ Մարտոյան
 ՀԲՀ— Հրաչյա Հովհաննիսյան
 ՀՔ— Հրաչյա Քոչար
 Մ.— մարմնաշարժում
 ՄԱ— Մկրտիչ Արմեն
 ՄԳ— Մուշեղ Գալշոյան

ՄԿ— Միքայել Կյուրճյան
 ՄՄ— Մանուկ Մանգակահանյան
 Ն.— Նար-Ռոս
 Ն. տ.— Նույն տեղում
 Շ.— շարժանք
 ՇԸ— Շիրվանգաղե
 ՊԶ— Պերճ Զեյթունցյան
 ՊՊ— Պերճ Պոռշյան
 ԼԼԼ— Սուրեն Այվազյան
 «ՍԳՐ»— «Սովետական գրականություն» ամսագիր
 ՍԶ— Ստեփան Զորյան
 ՍԹ— Սոնա Թեկերյան
 ՎԱ— Վախթանգ Անանյան
 ՎԳ— Վահան Գրիգորյան
 ՎԳՐ— Վահագն Գրիգորյան
 ՎՎ— Վաղարշ Վաղարշյան
 ՎՏ— Վազգեն Տալյան
 ՎՓ— Վրթանես Փափազյան

Г. ГЕВОРКЯН—Указательная жестикуляция у армян.—В настоящей статье приводится 27 указательных кинем, принятых у армян, из которых 18—жесты, 7—позы, 2—мимические движения и 1—телодвижение. Из частей тела основную функцию указывания выполняют: кисть руки в 12 случаях кинем, указательный палец—6, голова—3, нога—2, большой палец—1, глаза—1, брови—1. Относительно второстепенную, но важную роль играют рука и плечо: рука в 20, плечо—в 4. Из предметов в качестве основного средства указания служат трости и указка.

Указательные кинемы призваны выделить из окружающей среды предметы, лица, пространство, направление. При выполнении части кинем имеет место непосредственный контакт между жестикулирующим и объектом; между тем, другая, сравнительно большая часть выполняется на определенном расстоянии от объекта. Сопутствуя устной речи, указательные кинемы сопоставляются с указательными местоимениями, конкретизируя и выявляя абстрактные значения последних. Ниже приводится список указательных кинем, принятых у армян. Взять кого-л. за плечи (за плечо), головой показать на что-л. впереди, продемонстрировать предмет (размахивать им перед собой, крутить над головой, протянуть вперед), повернуть голову в сторону кого-л., чего-л., поднять чью-либо руку над головой, показать большим пальцем через плечо, показать бровями, показать глазами, показать кистью руки, протягивая ее вперед, показать ногой, выдвинув ее вперед, показать тростью (указкой), показать указательным пальцем, вытягивая его вверх, показать указательным пальцем, вытягивая его вниз, положить руку на предмет, положить руку на чье-л. плечо, положить указательный палец на что-л., протягивать ладонь кому-л., расправив руки, заключить какое-то пространство в объятья, сделать движение головой, показывая через плечо, топтать ногой о землю, ударить или стучать указательным пальцем по предмету, ударить (похлопать) по чьему-л. плечу, ударить (похлопать) рукой по предмету, ударить рукой по чьему-л. затылку, широким движением руки очертить полукруг или круг в воздухе.